ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՑԺԶ· 1867 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ· — ՄԱՑԻՍ

ՃԱՆԱՊԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԶՈՒԱՐ ՃԻՑԷՐՃԻ ՕՂԼՈՒ ՔԱՀԱՆԱՑԻ

Եւ ուխտ յԵրուսաղէմ, յամի 1711–12·

Այս ճանապարհագրութիւնը կամ ուխտագնացութիւնը 'ի Կ.Պոլսէ յԵրուսաղէմ հեղինակին ինքնագիր գրածէն օրինակելով կը հրատարակենք, պահելով իր ռամկախօս լեզուն, գրաբարով աշխարհաբարով և տաճկերէնով խառնած, միայն սխալագրութիւնը ուղղելով. յուսալով որ այս խառնակ բայց անաշխատ լեզուն ալ իր ոճին պէս կրնայ զուարճութիւն մը տալ ընթերցողաց, ինչպէս որ բանասիրաց համար կրնան օգտակար ըլլալ ասկէ դար ու կէս առաջ Երուսաղէմի ազգային վանքերուն և սովորութեանց տեղեկութիւնքն, մանաւանդ ուխտաւորաց՝ որ կրնան ալ բաղդատել զանոնք հիմակուան ատենիս վիճակին և իրենց տեսածներուն հետ, և իմանալ փոփոխուածը կամ անփոփոխ մնացածը։

Յորժամ ամենայն ինչ կատարեալ եղև առևտուր և ամենայն ինչ, և նաւն պատրաստեցաւ գնալ 'ի սուրբ յԵրուսաղէմ, էր թուականիս Հայոց ՌՃԿԷ, իսկ յամսեանն սեպտեմբերի ինն, պատկեր աւուրն կիրակէի·

Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Սկսանիմք յայտ առնել զճանապարհորդիլն մեր 'ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ։ Իսկ ամսեանն սեպտեմբերի 9, պատկեր աւուր կիրակէի, եաթ-ծուին[1] Ըստամպօլու ելանք, և Տէր ուղ-

1 Եաթուը· գիշերուան պառկելու ժամը։

ղեա ասացաք. և յաւարտմանն՝ միաբան՝ Աստուած բարի ճանապարհ տայ՝ ասելով, տասնում օրն երկուշաբթի՝ յետնուց[1] մօտ՝ թէքիրտաղի հասաք. երկու գիշեր անդ պառկեցանք. և անդ Թագաւորն[2] ուխտ արարաք, և օգնութիւն խնդրեցաք 'ի նմանէ։ Զորեքշաբթի անդ լսեցաք զաւետիս հօրն մերում սրբազան Սահակ աստուածաբանութեան վարդապետին, ձեռամբ տիրացու նօտար խաչատուրին. և տուաք զպաղշիշն լիով։ Եւս բաղում ուրախութեամբ եղաք անտի մինչև 'ի յօր հասարակին Գալիպօլի[3] առջևն հասանք. բայց նաւավարն ոչ կամեցաւ հանդիպիլ. և տեսաք որ փոքր նաւ մի եկ առ մեզ. և կայր 'ի միջի նորա երկու Հրեայ. և մեք մտեալ անդ, թէ տանի զմեզ Գալիպօլի. և նաւավարն ասաց մեզ. Այս մարդիքս հանեմ դիմաց Լափսէքի[4]. և ապա զձեզ տանիմ։ Եւ մեք կամեցաք որ մեծ նաւն ելանեմք. — ամմա ուր կու հասանիս. — նա հեռացաւ 'ի մեզանէ. և մեք գնացաք 'ի Լափսէքի. զայն երկու Հրեայն դուրս հանեց. մեք ևս ելաք դուրս. մինչև 'ի չարտախն յետուէկ պիտի քաշէ, և ապա յելքէն անէ. տղաքն մեր ջատագովութիւն արարին[5], քաշեցին մինչև 'ի չարտախն. որ ասկէրն աստի անցանէ 'ի գնալն և 'ի գալն պատերազմ։ Մեք ևս կեահի ելքէնով կեահի քիւրէկով հազիւ հասաք Գալիպօլի, և ելաք 'ի դուրս։

Նայ տեսանեմք մին մարդ մեզ ասաց, թէ վեր եկէք, աղան ձեզ կ'ուզէ։ Մեք ևս ելաք վեր. որ անդ ոմն նստեալ զարքաճի Հասան աղա անուն թէֆտէրնիս նայեցաւ. անուշ լեզու, Աստուած բարի ճանապարհ տայ ասելով։ Եւ մեք գնացաք դէպ 'ի գիւղն. և կամիմ գնալ Հաճի Սինանին տունն. զի զավլ[6] ունէաք որ կամայ և յակամայ հանդիպելու էի։ Եւ յորժամ կամեցայ հարցանել, նայ յանկարծակի մինն ասաց, թէ Հաճի Սինանին կինն մեռաւ. և ես անդէն ապուշ մնացի և թուլացայ, և ոչ կամէի գնալ տունն նորա. նոքա իմացան և ցոյց տուին զդուռն. և 'ի մտանելն իմ 'ի ներս՝ և տեսի նստեալ առջև փրռանն որ մեծ և փոքր 20 հոգի. և նոքա զիս տեսանելն՝ 'ի բաց թռեաւ կին մի նստեալ տեղացն, որ մեռած խաթունին մայրն է եղեր. անկաւ առ ոտս հառաչելով։ Դուստրն և որդիքն, և ծառայքն՝ այնչափ լաց և հառաչանք (արարին) ոչ սակաւ, բոլոր ժամ մի։ Եայ, ինչպէս խաթուն տանտիկին է եղեր, որ ամենեքեան վկայեցին։ Ի մեռանելն սորա՝ գիւղն բովանդակ աւաղեր են, մինչև 'ի յայլազգին հետ։ Ապայ, եղբայր, տըներ սարայի նման՝ ծովահայեաց, պաղպաղչայ՝ քան զչափն աւելի։ Մահտեսի Սինանն անդ չէր, բանայիր էր գնացեալ. և ասացեալ էր թէ խոստովանահայրս գայ հանդիպի նէ՝ ինչպէս հարկիս կ'անես. նայ ևս լուսաւորեալ հոգին ասացեր է, թէ քո տէվլէթին լայեխ ինչ է նէ՝ զայն կ'անեմ։ Երկու աւուր մեռեալ էր 'ի մեր գնալն, նա երեքշաբթի մեռեր էր, և մեք հինգշաբթի գնացաք։ Եւ առեալ զմեզ վեր տարեալ, մարդ ուղարկեցի զԲէլէշ Սարգիսն, և զալգայ Սարգիսն ձայնեցի. ևս խաչգոն եկ. նստեցաք սակաւ մի և կերակուր բերին. — եա, դարուվար կ'երթայ մի։— Եւ մեք մէկ քիչ յորդորեցաք զնոսա և մխիթարեցաք որչափ որ մեր կարն էր։ — Եղբայր, փաշայի տուն. ամենայն ինչ լի և անթերի. — փոշիմանեցայ ելանելս. ամմա՝ նէտէն սօնդրայ։ — Եւ ասացի զՀոգւոցն և ըզհայր մերն. և ողջունեցաք զնոսա և ելաք անտի։

Շուրջ եկաք զգիւղաքաղաքն բովանդակ. ապա իջաք 'ի եալուն[1], և անդ բռնեցաք նաւ մի չորս զուռուշ. մնաք 'ի մէջն 10 հոգի. և նոքա մեզ բերեալ

1 Յետնուց, կէսօրուան և իրիկուան միջոց։

2 Ս. Թագաւոր անուանի խաչ և ուխտատեղի Հայոց 'ի Թէքիր տաղ կամ Ռոտոսդոյ։

3 Կէլիպօլու։

4 Կէլիպօլուին դիմաց Փ. Ասիոյ եղերքը, հին ատեն Լամպսակոն։

5 Ճարպիկութիւն։

6 Դավլ, դաշինք, խօսք տալը։

1 Ծովեղր. նաւակայք։

28 ձմերուկ և քրթոց մի խաղող. և մը-
նացիք բարով ասացաք։ Բայց նաւա-
վարն վարպետ գոլով բացեալ զառա-
գաստն և յուղի անկեալ 'ի ճանապարհ,
հոգն մեր (էր). և հասաք 'ի Պողազհի-
սար, որ իրիկուան մին սահաթ էր մը-
նացեր։ Առաւօտն ուրբաթի ելաք դուրս
հանդերձ քէլէշ Սարգիսով. ևս շուրջ
եկաք զշուկան, որ երկու կողմն կայ
խանութներ, պարտախանիք, զանազան
գոյնզգոյն, զինչ և կամիս։ Ապա պա-
տահեալ մեզ ցարութիւն աղան որ Սա-
հակին աներձագն է, և գնացաք 'ի գե-
բեզմանատունն. և անդ օրհնեցաք ըզ-
Մահտեսի Մարկոսին տղին գերեզմանն
և Պոշգոյին։ Եւ դարձաք դէպ 'ի եալուն՝
զուսմանեա տեսնելու [1]. և առի սիրուն
դարակօզլի [2] ոչխար մի և ուլ [3] մի. և
մտաք 'ի նաւն։

Եղբարք, ասա մէկ քանի նաւ կայ, որ
ամենն հինգ հինգ չիֆտէ են. եկն Կէօմ-
րիւկձիի նաւն, հախլաշմիշ [4] եղաք. և
կայր 'ի միջի նաւին մերում չպուռիս [5]
երկաթ, որ կամէր տաճիկ մի Ըռատոզ [6]
տանէր և իսկոյն դուրս հանեցին նա-
ւէն թէ եատաիւ է, և անդ յամեցաք մին-
չև 'ի յետնուց ժամն. ըռէիզն ասաց թէ
ես զվարի դալէն [7] ցորեկով կու անցը-
նեմ։ Նայ թող եատուր. և գնալն մեր ե-
բեկոյ եղև և ոչ կարաց անցանել, քով
էառ և երկաթ ձգեաց ափրնտին, և եր-
կաթն ճորով բռնեց. դիմացի դալէն
կրակ ցոյց տուին. նայ տեսանք որ ղոչ-
—ղայիդին [8] եկն մեր վերայ, զթայ-
ֆայն [9] վեր հանեց ասելով. Այս ինչ
ատեն է որ կու անցնիս. դու չէս դի-
տեր այս դալէնիս սէրպէստ [10] է. թա-
գաւորի նաւ լինայ թօփով կու կոխեն։
Մեր ըռէիզն այլ ասաց թէ կանուխ էր,
ապա հոգն կտրեցաւ. տանըհինգ փա-
բայ հախ ունեն 'ի բաց՝ [1] երկու զօլ-
թայ և մէկ քէլլէ չէքէր. քսան փա-
բայ այլ ղայեխ ըռէիզին տուան, դէս-
տիւր [2] եղև. կրկին երկաթ առանք ան-
ցանք զղալէն 'ի մեր ճանապարհն։ Մէկ
քիչ Սուսամ ատասին ահ քաշեցաք.
երկու ղալիոն [3] տեսաք, գոհուլթի Քրիս-
տոսի, որ տաճկի ղալիոն էր. յետ նորա
եկաք 'ի Սախբզի առջև, մեք կամեցանք
թէ հանդիպինք, նաւավարն ոչ կամե-
ցաւ ոչ Սախբզ և ոչ Իստէնքէյ. Ըռատոս
արգուշամիշ արաւ ու գնաց։ Սեպտեմ-
բերի 18 օրն չորեքշաբաթի կանուխ
սապահ նամազուն [4] Ըռատոզ երկաթ
ձգեց. ասա կեցաք 15 օր, և նաւք շատ.
եկն ղալիոն մի պէյլիկ որ սովորութիւն
է Մսրայ կէմիստանուն [5] առջևն կ'ինկ-
նի կու տանի. աղապանտայ պառկե-
ցաւ և թօփ նետեց. նաւերն ամենն
պատրաստեցան և ելան գնացին։ Եւ մեք
մնացաք իլիմանին մէջն միայն. ապա
զպատճառն հարցանեք. նաւին մէջն
երկու միջոց կամ թէ այլ երկու նաւա-
վար որ ոչ են այսմ գիւղէ. ամենեքեան
ցրուեցան իբրև զկատաղի շուն. ասա-
ցինք ըռէիզին թէ դու ընդէր չելեր նո-
ցա հետ. նա այլ մեզ ասաց, թէ իմ ըս-
տակն տեղս կու տաք որ ես ատ տալիք
ունիմ, տամ վճարվիմ։ Այս տեղս թա-
թարղան կայր, որ անունն Ղավղայ—
Սուլթան կոչի. վաղեմի բարեկամ ե-
ղեր Կալիպօլցի Սօղան օղլու մահտեսի
Պետրոսին հետ. գնաց պուշուշմիշ [6]
եղև նորա դազնատարին. նայ տիրու-
թիւն արաւ. հիւճէթն [7] ցոյց տուաք.
նայ այլ ըռէիզին ասաց, թէ այս հիւ-
ճէթին ինչ կ'ասես։ — Իրաւի այսպէս
է, բայց պարտականն գիս կու նեղէ։
Նայ քէֆիլ եղև թէ այս մարդիքս տեղն
հասուցանես. և մեք՝ ուխտաւորէն քի-
չէն քիչ և շատէն շատ՝ ժողովեցաք, տա-

1 Պաշար առնուլ։
2 Սեւաչուվ։
3 Այծու ձագ։
4 Հաւանիլ առնելու տալիքի վրայոք։
5 Երկաթեղէն գաւազանի պէս կտրած։
6 Հռոդոս կղզին։
7 Վարի բերդն։
8 Պահպանութիւն ընող նաւն։
9 Նաւաստիք։
10 Ազատ։

1 Բաց 'ի 15 փարայ առնելու իրաւունքէն։
2 Հաշտութիւն, շտկութիւն։
3 Մեծ կամ պատերազմի նաւ։
4 Առաւօտեան աղօթից ժամ Տաճկաց.
5 Նաւերուն։
6 Խօսիլ, յարմարցընել.
7 Դաշնաթուղթ։

բանք թաթարխանին ու խաղնատա-
բին առաջին տուանք. հիւճէթին յետևն՝
ինչ որ Ստամպոլ տուեալ դրամին ներ-
քև գրեց, ըռէիզին մօհրել ետուր [1]։ Ա-
պայ ասաց թէ վաղն օրհասարակին
յետոյ կու ելանեմ. բայց այս գիշերն
անկարծակի չորրորդում սահաթի՝
ճայթմունք և որոտմունք եղև, որ լե-
զուաւ ոչ կարեմք պատմել. և տես, եղ-
բայր, որ նաւին մէջն նաւավար չիկայ.
և բերդին դռներն գոց. ըխտաւորք, ա-
մենեքեան վեր վազեցինք. կէմիձիու-
թիւն արանք, հազիւ երկաթ մ'այլ ձգե-
ցինք. ապայ անահ նստեցանք. բերդն
այլ խիստ մօտ էր, նորաէ վախեցանք։
Այն գնացող նաւերն ոմն շաբաթի ա-
ւուր եկեալ ոմն կիրակի՝ ցիր և ցան ե-
կեալ 'ի ղիմաևն մտեալ. ոմանք բեռ-
ներն նետեր էին, ոմանց տիրէկն [2] կոտ-
րեր է. և ոմանց եղբէևն բզիկ բզիկ ե-
ղեալ. և մեր տեսեալ զայն՝ գոհութիւն
տուաք Աստուծոյ և սրբոյն Յակոբայ,
որ յայնպիսի ալէկոծութենէ փրկեաց
զմեզ։ Կրկին եօթն օր այլ նստաք։

Եթէ քաղաքին մէջն կամ մաՀաշևին,
այնչափ զէվք [3] արաք որ լինալու չէ.
զպաղչաևն'րն մի ասեմ, գբաղցր ջուրն
մի ասեմ, և զքօշկ'ն մի ասեմ. և զմը-
սին միւպահութիւնն [4] մի ասեմ. գի-
նուն ածնութիւնն մի ասեմ։ Նաւէն ե-
լաք դուրս մեր յէլքէևձուն տունն գնա-
ցաք, մետասան օր անդ նստեցաք. մե-
զի պաշտա տուն գիշերն պառկելու հա-
մար. ապա ցորեկն պաղչանին քօշկին
ներքև ջուր առաջև, իլիմոնլուխ կեր-
պիւ կերպիւ, անուշն ուրիշ և թրթուն
ուրիշ, թուրինճն ուրիշ, գետնի վերա
սփռեալ իբրև զթրթենի. մէկ փարայ
տաս՝ երեսուն հատ ձեռաքտ փրցուր. և
խիարն՝ որ մալթէփէուն թուրվանուն
նմանի՝ վեցն մէկ փարայ։ Եւ զայն ևս
պատմեմ, որ կայ անդ եկեղեցի մի որ
մետրապոլիան անդ նստի. և 'ի գնալն
մեր եկեղեցին՝ մետրապոլիան զմեզ
տեսնելնուն պէս՝ տեղ ցոյց տուին. և
անդ կանգնեցաք մինչև 'ի յաւարտ ժա-
մուն. ապսպրեր է զմեզ ներս տարին։
Եայ եղբայր, այնպէս տեղ մի նստեր,
որ առաջևն մեծ հաւուզ, և իւր նստած
տեղին քով մեծ շատրուան մի, որ ջուրն՝
թէրազի է արեր պաղչայէն՝ որ ջորին
կու քաշէ և անտի գայ, և անտի ճանա-
պարհ ունի որ հաւուզն կ'երթայ։ Եւ
մեզ առ իւրն բազմեցոյց. և ճերմակ
ջուր [1] փոքրիկ գաւաթով, և մէզէն 'ի
հետ նորա. բաղում զրոյց տուաք հետ
միմեանց. ևս մեզ մխիթարեց. և ը-
ռէիզն անդ էր, թէմպիհ արաւ թէ այս
մարդիկքս Եաֆայ տանիս և ոչ այլ ու-
րեք տեղ չի հանես. նա ևս յանձն ա-
ռեալ և մէթանիայ [2] արաւ մետրապո-
լիտին։ Եւ կայ այն քէօշկին մէջն կա-
խեալ երեք սահաայ ճնճղուկ զաֆէսով.
զատ տեղ չէք տեսեր. իբրև զնման
պիւլպիւլի կու խօսին։ Իշտէ կի'տին.
թագաւորութիւն կու քշէ իւր ազգին.
և մեք ամօթով մնացինք։ Եկն միտս
իմ, միւս օրն նաւն գնացի, երկու գը-
լուխ չէքեր չէրբէթի հանեցի, տղին հետ
յուղարկեցի. — զայն տեսանեմք, երկու
սէլէ յէմիշ, և մէկ չիշէ բարկ ըրախի
ուղարկեալ էր ընդ մեզ. և ուր պաղչայ
կ'երթայինք՝ մարդ էր դրեր կօղչի [3] և
յետևէ սեղան կ'ուղարկէր. և ես բերող
լազգալոզին [4] զձեռքն դատարկ չէի թող-
ղեր, կամ տղոցն։ Կամեցաւ գնալ իս-
տէնքէօյ նուիրակութեան, ձայնեց ըզ-
մեզ կրկին, անուշեղինով, և գահվէն
ընդ նմայ. յետ նորա ձեռք լուանալ,
վարդէջուր և պուհուր. մեզ հետ բա-
րով մնայ արաւ, դուք ինձ աղօթք ա-
րէք ասաց և ես ձեզ։ Անուշ լեզու, կեր-
պարանաք փառահեղ. մին փոքր լեզուն
լեթատ է [5], և անունն այս մետրապոլի-
տին՝ Իգնատիոս կու անուանի. և հօր-
եղբայր սորին՝ Ղուզղունճուխ վանք մի
շինել ետուր, և անդ է այժմուս։ Միւս

1 Կնքել տուաւ։
2 Կայմն։
3 Զբօսանք։
4 Աղէկութիւն։

1 Օղի, ռաքը։
2 Խոստմունք, վկայութիւն, կամ զոչմունք։
3 Դիտող, լրտես։
4 Տասգալոս, վարժապետ (Յունաց)։
5 Թլուատ, թոթով։

օրն փոքր նաւ մի պատրաստեցաւ նո-
ցա, 'ի մեր նաւին քոջն. եկն մառաչ ու
հանդերձ միաբանօք և ժողովրդով, ե-
մուտ մեր նաւն, ըռէիզն սեղան տեսաւ,
մէկ քիչն նստաւ օրհնեաց զմեր նաւն
խաչակնքելով, գնաց իւր նաւն. և մեր
թայֆան պատրաստութիւն տեսան, եր-
կու թօփ յեռևէ նետեցին որ իսկէլէն
բովանդակ դղրդեցաւ։ Աստուած բարի
ճանապարհ տայ։

Եւ մեր անդ նստելնիս եղև լման քը-
սանևինն օր. հոկտեմբերի 15 պատկեր
աւուր երկուշաբաթի 'ի տօնի Գրիգորի
Աղուանից կաթողիկոսի ելանք Ըռատո-
զու դէպ յերուսաղէմ, տասնըեօթ նաւ
էաք. հինգշաբթի ութնում սահա-
թի գիշերոյն՝ անկարծակի զալիոն մի
տեսաք. եթէ հարցանես, եղբայր, ե-
րեք միս (միլ) այնճախ էր հեռաւորու-
թիւնն. մեր յէլքէնճին իսկոյն ճչեց թէ
արման է. նոյն կէտն ամենեքեան վեր
թափեցան. մեր նաւն գլուխ դարձոյց
փօձալամիշ [1] արաւ. նայ այլ զմեզ
տեսաւ օրուայ [1] արաւ և գնաց, կարծե-
լով թէ մեք ևս զալիոն եմք. նայ մեզ-
նից վախեց, մեք նորանէ. մէկ յեքէնի
վերայ եկանք։ Ի տօնի աւետարանչացն
աւուր շաբաթ առաւօտուն՝ ղբյիլի [2] ե-
րևաց. ոմն ասաց թէ Եաֆայ է, և ոմն
ասաց թէ Հայֆայ է, որոնելով մինչև
երեկոյ եղև, ոմանք զբեռներն դուրս
հանին հազբը եղան. յանկարծ հով մի
ելաւ, յետ դարձաք, գիշերն շուրջ ե-
կաք 'ի վերայ ծովու մինչև 'ի լոյս. յետ
լուսոյն այլ վերով ելանք. ապա հով չկայ
մինչև 'ի յօր հասարակ. ոմն զբչէն [3]
տիւլպիւնով, և ոմն գլխէն թէ սայ է
Եաֆայ կամ նայ է. ընդ ամէնն քսան
միլ տեղ անճախ կայ. տեսանի որ սի-
բուն հանդարտ հով մի ելաւ յետնուց
ժամանակին Եաֆայու առաջին եր-
կաթ ձգեցանք։ Առ ընտի քեզի, շա-
թուրներն [4] արձակեցան 'ի վերայ նա-
ւին. բեռներն ձգող ձգողին. մէկ ուրա-
խութիւն մի որ լեզուաւ չի պատմիլ.
եթէ հարցանես զՖէլլահներն՝ ուռու-
պան [1] տունն են մոռցեր. ծոքն հան-
դարտ և իլիման, գիտես թէ տիշպէնտ
են սիրեր։ Ելանք 'ի Եաֆայու իսկէլէն
շուտով, զբարակ աւազն համբուրեցինք
ամենեքեանս։ Աստուած ձեզ ևս ար-
ժանի անէ. ամէն։

Հոկտեմբերի 21 օրն կիրակի առտ
հասաք. Ըռատօզու որ ելաք եօթն օրն
հասաք Եաֆայ. ելանք 'ի վանքն. ամե-
նեքեանքս յերկէղմիշ եղանք. միւս օրն
նաւն մնացած բեռներն ևս հանեցաք.
նայ ևս վանից շէյերն [2], և զատ մի չի-
մնաց։ Այս հոռմի նաւավարի գողերուն
դարար չի լինար, եղբայր։ Բայց միւս
օրն ծով մի եղաւ որ նաւն շուտով վե-
րացաւ. երբ նաւն դէպ 'ի ծոքն բացուե-
ցաւ՝ մեք այլ չի ճանաչեցինք, տաճկի
փաթռոնա կու նմանէր. ինչպէս գողն
չիվախնար։ Յետ այնորիկ չորս ամիս է
եղեր որ անձրև չէր եկեր. իսկոյն ան-
ձրև եկաւ որ ամենեքեան ուրախացան
և ասացին, թէ ձեր ոտքն ուղուղու է
եղեր։ —Ի՞նչպէս ուղուրլու չէ, որ կիրա-
կի իրիկուն Եաֆայ ելաք, երկուշաբթի
առաւօտուն՝ աղան մեռաւ. — ամմա՝
պակսելու պիղծ մի է եղեր։

Ի տօնի սուրբ խաչի՝ պարզ եղև.
քէվրանի կու սպասէաք որ գնալոց էաք
'ի սուրբ Երուսաղէմ, երկուշաբթի մէկ
քիչ տնաշար եկաւ, բայց ուղտ ոչ գոյր.
ոմանք ասին թէ երթանք. ոմանք ա-
սին թէ ուր գնամք այսչափ տաւարով,
որ ձին քիչ և էշն շատ. որու բեռն բառ-
նան, կամ թէ որու հեծնեն. սոյն օրն
դադարեցանք գնալուն։

Աստ սակաւ մի պատմեմ զԵաֆայն.
վանից դռնէն դուրս որ ելանես, աջ
կողմն միզան կայ. և աղային նստած
օտան և առաջին փէքէն [3]. և կ'անց-
նիս քիչ մի յառաջ՝ ձամի որ մաղա-
զաներուն քիրայէն վախքի կապեր է
լուսաւորեալ հոգի Եղիազար կաթողի-
կոսն, որ այն վանքն հաստատ մնացեր

1 Ալ կամ ձախ կողմ դարձընել նաւը։
2 Ցամաքն։
3 Նաւուն ետևի կողմն։
4 Շալիք. տձ.

1 Զգեստ. մերկ էին։
2 Բաները։
3 Նստարան։

և անտի քիչ մը յառաջ՝ խանութներն. կայ անդ մեծ հոր մի՝ որ անտի կու ծա-խեն ջուրն, ջառնան [1] մէկ փարայ. այս հորս դէպ 'ի եալոուն է, և սատ կայ. և այս երկու սրբան [2] կայ խանութ-ներ, պէրպէր, ախտէր, դերձակ, դա-սապ, դանվէդանա, բաղանիս. մինչև կու ելանես մէյտան մի բաց. անդ կայ սէմէրձի, էսկիձի, զաւզայձի. ևս պա-ղրիձի. և պաթմանն ձկան ութ փարայ։ Եւ սատի է ճանապարհ սուրբ Երուսա-ղեմայ. և այս մէյտանին վերովն բաղ-նեց տօղապն է. բայց ղօվայի տեղ՝ ման-տրը ճառայ են կապեր։ Եւ այս կողմէս գնայաք դէպ 'ի դալէն. դուռն հաստատ և թօփերն հարուստ. և անտի Ֆէլլահ-ներուն տունն շուրջ եկանք. ոմն խրսիր կու գործեն, և ոմանք հաց կ'եփեն. անդ տեսայ դուռնմձուռ խանութ մի փոքրիկ, լեռան գլուխն օպայ է [3] որ սաղով հիւ-սեալ են, և վերանին հողով ծածկել սոխախնին ջրրճոխ. թող զչամուռն և աղբանոց. հաղիւ միւս կողմն անցաք. ևս անդ կայ. ցիր և ցան թօփեր են ե-գեալ որ տիւղնան պատահի անտի կը-բակ անին։ Կամիս վար իջանել. անդ է գերեզմանատունն Հայոց, որ բլրի մը վրայ է. որ անձրև գայ նէ՝ քովերն 'ի վայր կու իջանէ. շուտով կու խախտի. սորայ քովն կայ փոքր եօխուշ մի. 'ի վայր իջանես՝ կայ հոր մի, որ վերոյգրեալ Ֆէլլահներն անտի կ'առնեն զջուրն. և սորա առաջև իլիման մի մեծ՝ որ շահ-թուրներն անդ կու քաշեն. և կայ տաան նաև կամ թէ այլ աւելի, որ նոցա դայ-եաստա կ'ասեն որ Մբսբրայ իսկէլէն կու բանի. նոքայ ևս անդ խրշլայ կու քա-շեն։ Եւ եկ սատիս որ է Հոռոմոց վան-քըն, եղբայր, փոքր և նեղ փիս դարա-պայ. որ մեզի շատ հասրէթ կու քաշեն։ Եւ սորա սրբան մինչև 'ի ճամին կամ այլ առաջ՝ մաղաղայ է, մեր վանիցն է. Աստուած ողորմի չինողին հօրն. ամէն։

Սոյն գիշեր կէս գիշերոյն յէնկիչերի-քըն բազում ուղտ քշեալ բերին. ա-մենքեանքս զարթեայք, բեռներն կա-պեցաք։ Առաւօտուն Եաֆայու ծովե-զերն տեսնէիք՝ թէ որչափ դալլիդուլլէ, իշպէքդուլ, էշ տաիխլ դուխուլ, թար-իւանայ պլդուր. յետ նորա բեռցաք. նման ոչխարի մի՝ մի առջևէ դաֆար-ձուն անցաք. իւր տուած թխտերն մե-զանից առաւ, ապա թող ետուր. ինչ դատիր է [1] որ մին մարդ փախչի. օրուշ-բախ իքէն պէլքի գիշերով լինայ. ամ-մա՝ այս տեղս չեն կարնար։ Գնացաք 'ի դուրս՝ չայիրն նստաք, մինչև յետին ըխտաւորքն միատեղ գան, և յէնկի-չէրիքն չորս կողմն առեալ են, ամենե-քեանն սիլահով։ Ճանապարհ ելանք, հաղիւ մօտեցանք Ըռէմլէ. և կայ սատ դուր տեղ մի՝ որ մարդ գլուխ երկու փարայ դաֆար կ'առնեն. և տուաք ըզ-Զաֆարն և անցաք և մտաք 'ի յԸռէմ-լէ վանքն. սատ գեղացիք զմեզ բաւա-շայ արին և յէրլէշմիշ եղանք։ Ապայ եղբայր, սիրուն գեղեցիկ վանք մի նո-րաշէն, շուրջ եկանք մի ըստ միոյէ ըզ-տանիսներն և պաղչան, սիրուն թու-րունճի ծառերով, գիտես թէ վարդա-պետն նոր է էլեր միջէն. և կայ սիրուն եկեղեցի մը յանուն սրբոյն Գէորգայ. և գիշերն այն իսկի քուն չեղաք. մու-սէլլիմն զմեզ հանգիստ չթողուց, մին-չև հարիւր չորս գլուռուշ առաւ։ Առա-ւօտ եղև բեռցաք, և կամիմք գնալ. դարաձին զդուռն գոցեալ՝ մի մի զթրիս-տերնիս հայեցաւ. իսկի միոյն եանգլիշն չիգտաւ. դարձաւ, թէ «Պէնիմ այտէթմ վար տրը, իւչ ալթուն վէրին, սիզի գոյ-վէրիմ քի կիտէսինիզ. — մեք ևս, ճա-ներնուս քեար արաւ, թափեցանք քը-սան հոգի զատուն դուռն ասելով. Ցեվ-լէթլի, սէնին զամանընտայ պիզէ քիւլ-լի եաղրք տրը, վէ ատէտ օլմայան չէյի իստէր զարաճճի. հէփիմիզին քեահիտի կօրտու, վէ իւչ ալթուն իստէր։ Դատա-ւորն կանչեց այն տեղի եղեալ թէրճի-մանն. խսկոյն զօռ մի առաւ, թէ այս ինչ բան է ձեր արարմունքն. սոքա թա-գաւորի ըրայէ են, մարդու գլուխ կըտ-

1 Սափոր, աման։
2 Կարգ։
3 Վրան. լոքը, կամ խրճիթ։

մենքեանքս զարթեայք, բեռներն կա-պեցաք։ Առաւօտուն Եաֆայու ծովե-զերն տեսնէիք՝ թէ որչափ դալլիդուլլէ, իշպէքդուլ, էշ տաիխլ դուխուլ, թար-իւանայ պլդուր. յետ նորա բեռցաք. նման ոչխարի մի՝ մի առջևէ դաֆար-ձուն անցաք. իւր տուած թխտերն մե-զանից առաւ, ապա թող ետուր. ինչ դատիր է [1] որ մին մարդ փախչի. օրուշ-բախ իքէն պէլքի գիշերով լինայ. ամ-մա՝ այս տեղս չեն կարնար։ Գնացաք 'ի դուրս՝ չայիրն նստաք, մինչև յետին ըխտաւորքն միատեղ գան, և յէնկի-չէրիքն չորս կողմն առեալ են, ամենե-քեանն սիլահով։ Ճանապարհ ելանք, հաղիւ մօտեցանք Ըռէմլէ. և կայ սատ դուր տեղ մի՝ որ մարդ գլուխ երկու փարայ դաֆար կ'առնեն. և տուաք ըզ-Զաֆարն և անցաք և մտաք 'ի յԸռէմ-լէ վանքն. սատ գեղացիք զմեզ բաւա-շայ արին և յէրլէշմիշ եղանք։ Ապայ եղբայր, սիրուն գեղեցիկ վանք մի նո-րաշէն, շուրջ եկանք մի ըստ միոյէ ըզ-տանիսներն և պաղչան, սիրուն թու-րունճի ծառերով, գիտես թէ վարդա-պետն նոր է էլեր միջէն. և կայ սիրուն եկեղեցի մը յանուն սրբոյն Գէորգայ. և գիշերն այն իսկի քուն չեղաք. մու-սէլլիմն զմեզ հանգիստ չթողուց, մին-չև հարիւր չորս գլուռուշ առաւ։ Առա-ւօտ եղև բեռցաք, և կամիմք գնալ. դարաձին զդուռն գոցեալ՝ մի մի զթրիս-տերնիս հայեցաւ. իսկի միոյն եանգլիշն չիգտաւ. դարձաւ, թէ «Պէնիմ այտէթմ վար տրը, իւչ ալթուն վէրին, սիզի գոյ-վէրիմ քի կիտէսինիզ. — մեք ևս, ճա-ներնուս քեար արաւ, թափեցանք քը-սան հոգի զատուն դուռն ասելով. Ցեվ-լէթլի, սէնին զամանընտայ պիզէ քիւլ-լի եաղրք տրը, վէ ատէտ օլմայան չէյի իստէր զարաճճի. հէփիմիզին քեահիտի կօրտու, վէ իւչ ալթուն իստէր։ Դատա-ւորն կանչեց այն տեղի եղեալ թէրճի-մանն. խսկոյն զօռ մի առաւ, թէ այս ինչ բան է ձեր արարմունքն. սոքա թա-գաւորի ըրայէ են, մարդու գլուխ կըտ-

1 Կարելի չէ։

բել կու տան ասելով, մարդ ուղարկեց. տեսան որ զարաճճին փախեր էր. և մեք ճանապարհ ելաք։ Մինչև երեք սահաթի ճամբայ հեշտ է. բայց վեց սահաթի ճանապարհն քար և կիր, ցած ու բարձր, դար և փոս, նեղ և լայն. պօղազ կ'ասեն՝ երկու կողմն լեառ և նեղ ճամբայ մի, որ անտի մի մի անցանելոց են. իշէն ինկնողն ով, կամ թէ ուղտէն ինկնողն ով. Աստուած պէրէգէթ տայ յենկիչերոցըն. այնչափ սիլէդ կայ իրէն, անիծեալ Արաբն՝ իւր չարութիւնն ձեռաց չիձգել։ Այս ճանապարհս ծար ելանել մնտեցանք. անկարծ տեսանես որ լեռնէն 'ի վայր թափին 'ի պօղազն, և սկըսանին համրել, վահէտ, դրնէնի, դեշադիմ. զիրա դաֆար ունին։ Եւ այնմ տեղաց կու զատուիս, լեռ մի կայ առաջևդ, յետոյ կու իջանես Ջեշմէլին գիւղին մրջոցն կու անցնիս. որ երկու կողմին նստեալ են Ֆէլլահնին, և զմեզ թամաշա կ'անեն. անտէր մնայ իւրեանց գլուխն. մէկ մէաքվա[1] են խոթեր իւրեան մեջքն, և վոռն վարտիք չիկայ, և ոտքն բոկ. միաւոր մէկին ձեռքն ընկնիս՝ գրեզ կու հանուեցնէ և չըպլախ կ'անէ։ Եւ առաջ գնաս, կայ անդ սուր երդի միպատն, որ անկէ ջուր խմեն և անցնին գնան դէպ 'ի քօփրիւն. յորժամ գնան անդէն յենկիչերիքն՝ երկու զօլթայ և մէկ թուղթ մարդ գլուխ կ'առնէ. և ապա միւս կողմն կու անցնիս։ Էյինտի, գուշգունա գուշվէթ գամչիեան պէրէքէթ. ուշ մնացինք, վէ ձիան այլ գիտցան մնտենալն։ Եկեալ հասաք հայր Աբրահամու դուռն. և միաբանք զմեզ դիմեցին և կու հարցանեն թէ դու ով ես. մուխ տեղն՝ ոմն ճանաչեցի և ոմն ոչ. գնացաք 'ի սուրբ Յակոբ, մնաք. եարանն[2] զմեզ հոգէտունն իջեցոյց, այլ ուրիշ օտայ մի. տեսս ընտի. բարեկամներն եկեալ զմեզ շնորհակալեցին թէ բարի առաքեցաք. եարանին ասի թէ ծարաւ եմ և անօթի. ոմն վաղեմի բարեկամ՝ մահտեսի Պետրոս՝ որ Փիլիհանճիեան կոչի, իւր ձագուկին հաճի Եղեային հետ վանից թասով օրհնեալ պատուական գինի մի ուղարկեալ, և ես ծարաւի էի զթասն ձեռքս առի. նոյն կէտն Ցէր Երեմիայն միտքս եկաւ[1]. որ էր ամիս հոկտեմբերի 30, պատկեր աւուր իրեքշաբթի, եաթսուին հասաք ուրախութեամբ. և ժամ մի էանց, տաւարքն եկին զբեռներն առաք ներս անդ նստաք, մինչ զի զվերջն տեսանեմք։ Ապայ մին փոքր ննջեցաք. ժամկոչն ձայնեց, ամենեքեան ելաք գընացաք. զժամն շուտով ասեն, և սէք ձատէ սփռեցին, երկու մոմ վառեցին. մի մի զմոմին ստակն երկերկու ոսկի տըւանք, երկու երկու մոմ տուին դեղին. յորժամ կատարեցաւ՝ շարական Որդիքն որոտման իւրով սարքն ասացին. և յետ նորա Պօղոս վարդապետն պատմեց ըղսրբոյն Յակոբայ գլխատելն և զայլն. 'ի վերայ ծրնկաց փափագանաք համբուրեցինք. մին մոմն անդ տուաք, և մեծն առեալ գնացաք սուրբ Յարութեան դուռն. 'ի ճանապարհին՝ Հաւատով խոստովանիմ, և Ցէր ամենակալ ասացին առաջի ժողովրդեան, և գնացեալ տուաք զմոմն և զաղամպուրն. և դարձաք 'ի վանքն, դեռ ևս գիշեր էր. կըրկին քնացաք որ մէկ քիչ գլուխնիս խեղք դայ. և սովորութիւն է որ զարպատն տան. ապա գիր մի փոքր կու գրէ Հէնէն[2] և կու տայ ձեռն ըխտաւորին, որ նայ ցոյց կու տայ օտապաշին, և մարդուն կօրէ օտաև կու տայ. և ես նըստեալ դեռ ևս զարպատ չեմ տուեալ. չիկայ, ինչ տամ. նայ տեսայ որ ոմն բարեկամ այն փոքր գիրն ձեռս տըւեալ, և ես ձայնեցի օտապաշին և ցոյց տուի. ամենեքեան իւրեանց մէտէին կօրէ բռներ են. և ապայ կայ սիրուն օտայ մի որ ողորմած հոգի հաճի Նալին կու նստէր, բանալին իւր մնտն էր, ամմայ խիստ հարբած. գնացին ուղեցին.

1 Ծածկոց։
2 Ծանօթն, բարեկամն։

1 Կ'երևի թէ հոս գրուածն պակաս է, բան մոռցուած է ըսելու կամ գրելու։
2 Յովհաննէս Հաննէ վարդապետ, որ Երուսաղեմի ուխտի տեղեաց ատորագրութիւն մ'ըրած է և տպուած։

նայ ևս կու իմանայ որ ինձ համար է. շուտով կու տայ. և մեք տեղս կեցաք. և մեր հետ նաւին ըխտաւորացն երեսուն հոգի մնացին 'ի Եաֆա. քանզի տաւար չիլինալուն համար՝ յետ մէկ շաբթուն նոքայ ևս եկեալ հասան՝ խաղաղութեամբ։

Կը շարունակուի։

ՔԻՒՐԴ ԱԶԳ

Քիւրտերը թափառական ժողովուրդ կամ ազգ մ'են զանազան ցեղեր բաժնուած. իրենց բնակութիւնն է Սև ծովու և Կովկասու ստորոտները եղած գաւառներուն մէջ, որ տարածուին Տիգրիսի ու Եփրատայ հովիտներուն մէջ։ Իրենց մէջ գլխաւոր ու աւելի ծաղկած արհեստն է գողութիւն ու ասպատակութիւն, բայց Ռուսաց սահմանագլուխները մանաւոր զինուորներ ըլլալով՝ ասոնց արգելք կ'ըլլան, որով այն կողմերը չեն կրնար բանեցընել իրենց արհեստը։ Կրօնիւք Մահմետական են, բայց ոչ Ցաճկաց աղանդէն են, և ոչ Պարսից. տարբեր աղանդ մ'ալ իրենցն է։ Քիւրտերուն մէջէն Եզիտք ըսուածները շատ անպիտան են. կարաւաններու վրայ յարձակիլ ու զանոնք կողոպտելը օրինաւոր կը սեպեն, ինչպէս նաև օրինաւոր կը սեպեն մարդասպանութիւնը, գողութիւնը, ազգապղծութիւնը։

Քիւրտերուն ծագումն, այսինքն թէ ուսկից սերեալ են, կամ ով է իրենց մերձաւոր ու սեփական նահապետը չիգիտցուիր. ոմանք կը կարծեն թէ Էօզպէկ Թաթարներէն և կամ Մողոլներէն յառաջ եկած ըլլան. բայց այս կարծիքը հաստատութիւն մը չունի, որովհետև ասոնք իրենց արտաքին տեսքովը Թաթարներէն բոլորովին տարբեր մարդիկ են։ Կը կարծուի որ ասոնցմէ ոմանք Հայաստանի տառապանաց տարիները՝ մեր ազգէն դարձած ըլլան 'ի Քիւրտս. վասն զի կը տեսնուի իրենց Հայոց հետ ունեցած շատ վերաբերութիւններ, Հայոց դրակից ու տնակից ըլլալն, Հայոց աշխարհաբար լեզուն սորվելու՝ ու Հայու մը պէս խօսելու և արտաբերելու՝ կարդէ դուրս յարմարութիւն ունենալն։ Քիւրտերուն այլ և այլ ցեղերու հիմակուան տուած անուններն ալ շատ նմանութիւն ունին Հայոց այլ և այլ ցեղերուն անուանց հետ, ինչպէս Բգրանցիք–Բագրատունիք. Մամգցիք–Մամիկոնք. Ռշկրցիք–Ռշտունիք, և ասոնց նմանն շատեր։

Քիւրտերուն ծագմանը վրայ եղած աւանդութիւնը ինչպէս որ անորոշ է, այնպէս ալ իրենց յառաջադիմութեան վիճակը ոչ երբէք պայծառ երևոյթ մը ունեցեր է։ Ոչ գիր ունին և ոչ դպրութիւն. միայն լեզու մը ունին՝ որ Արաբացի, Պարսիկ, ու Մարաց լեզուին ամէն կերէնին խառնուրդ մըն է։ Կը կարծուի որ իրենց 'ի սկզբան ազգ ձևանալու ժամանակը՝ ինչ վիճակի մէջ որ էին, նոյնպէս լճացեալ դեռ կեցեր են մինչև ցայսօր. որով եթէ չունին հիմակուան ազգաց մտքի ու խելքի յառաջադիմութիւնը, ունին հին ատենուան հսկայից և բռնաւորաց կռուասէր բարքը ու քաջասրտութիւնը։

Հարուստներն ու ձիաւորները կէս մէջքով զգեստ մը կը հագնին՝ որուն թևերը երկայն ու ճղքուած՝ ուսերնէն դէպ 'ի վար կը կախուին. անոր վրայէն կ'առնուն դեռ երկայնկեկ ու լայն վերարկու մը՝ թևերուն ու փէշերուն վերջաւորները արծաթ ու ոսկի թելերով բանուած. գլուխնին ճերմակ բարձր գլխարկ մը՝ ծայրը սեպաձև, զոր կ'անուանեն քոլոս, և անոր բոլորտիքը պլլած բազմութիւն մը գոյնզգոյն բամբակեայ ու մետաքսեայ փակեղներու, որով գլխարկին հաստութիւնը գրեթէ ինչուան գրկաչափ մը կ'ըլլայ։ Կը հագնին նաև կարմիր կամ երկնագոյն չուխայէ կամ քթանէ ճերմակ լայնատարած անդրավարտիք մը՝ որուն ծալ 'ի ծալ խորշերուն մէջը բոլոր զէնքերնին անտեսանելի կ'ըլլան։ Բայց հետևակ ու լեռնցի պատերազմիկները՝ այսչափ իրենք զիրենք չեն բեռնաւորեր. ինչուկ